# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 86 - 87 (16384) ՇԱԲԱԹ, 21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ


ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՇԱՏ ԱՆԵԼԻՔՆԵՐ ՈՒՆԵՆՔ»



*Նոյեմբերի 17-ին Բրյուսելում անցկացվեց Վրաստան-Եվրամիություն ասոցիացման խորհրդի նիստը, որին մասնակցեցին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին եւ արտաքին գործերի ու անվտանգության քաղաքականության հարցերով Եվրամիության գերագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին:*

Նիստի ավարտից հետո, համատեղ մամլո ասուլիսում Իրակլի Ղարիբաշվիլին եւ Ֆեդերիկա Մոգերինին հանրագումարեցին արդյունքները: «Վրաստանը նշանակալից առաջընթաց ունի, որն իր արտահայտությունն է գտել ժողովրդականացման, օրենքի գերակայության, մարդու իրավունքների պաշտպանության, ինչպես նաեւ տնտեսական կայունության եւ աճի գործընթացներում, սակայն շատ անելիքներ ունենք, որպեսզի Վրաստանը հասցնենք Եվրամիության չափորոշիչներին»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին: Նրա խոսքերով, Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագիրը կարեւորագույն ներդրում է երկրի եվրոպական ապագա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՀՊԱՐՏ ԵՆՔ, ՈՐ ՀԻՄՆԵՑԻՆՔ ԲՈԼՈՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴԵՊ»



*Նոյեմբերի 16-ին միջազգային հանրությունը նշեց «Հանդուրժողականության միջազգային օրը»: Տոնը առանձնակի նշանավորվեց Վրաստանում: Այս առթիվ ընդունելություններ անցկացվեցին Վրաստանի նախագահի նստավայրում, կրոնի հարցերով պետական գործակալությունում, Թբիլիսիի սակրեբուլոյում:*

*Ինչպես արդեն հաղորդել ենք նախորդ համարում, «Վրաստան» թերթը, նոեմբերի 13-ին արժանացել է երկրի ժողովրդական պաշտպանի «Հանդուրժողականության աջակից» մրցանակի: Հանդիսավոր պայմաններում օմբուդսմեն Ուչա Նանուաշվիլին պատվավոր մրցանակը հանձնեց թերթի խմբագիր Վան Բայբուրթյանին:*

Իսկ նոյեմբերի 16-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ առաջին տիկին Մակա Չիչուան, «Հանդուրժողականության միջազգային օրվա» կապակցությամբ, Հավլաբարի նստավայրում

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

## ԸՆԴՈՒՆՎԵՑ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՍՏԱՑՄԱՆ ՈՐՈՇՈՒՄ

### ԱՆՑԿԱՑՎԵՑ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

*Նոյեմբերի 18-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախագահությամբ, անցկացվեց պետական անվտանգության եւ ճգնաժամերի կառավարման խորհրդի նիստը:*



Նիստում քննարկվեցին աշխարհում եւ տարածաշրջանում ստեղծված նոր իրավիճակի ենթատեքստով երկրի անվտանգության հետ առնչվող հարցեր:

Նիստում ընդգծվեց կանխիչ միջոցառումների ուժեղացման եւ անվտանգության լրացուցիչ միջոցների ձեռնարկման անհրաժեշտության մասին, հստակեցվեցին սահմանային պայմանակարգի եւ ռազմավարական օբյեկտների վերահսկողության խստացման միջոցառումները:

Հանդիպմանը ներկա էին Վրաստանի արտաքին գործերի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին, ՆԳ նախարար Գիորգի Մղեբրիշվի-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ՝ «ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՆՎԱՆԱԿԱՐԳԵՐՈՒՄ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ



«Հանդուրժողականության միջազգային օրվա» առթիվ Վրաստանի կրոնի հարցերով պետական գործակալությունում անցկացված միջոցառմանը գործակալության ղեկավար Զազա Վաշաղմաձեն հրապարակեց «Հանդուրժողականության աջակից» մրցանակի անվանակարգերում հաղթանակածներին: «Հանդուրժողական քաղաքագետ» մրցանակ շնորհվեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլուն, բռնագաղթվածների եւ փախստականների նախարար Սոզար Սուբարիին եւ հաշտեցման ու քաղաքացիական իրավահավասարության պետնախարար Պաատա Զաքարեիշվիլուն, «Հանդուրժողական թբիլիսցի» մրցանակին արժանացավ մարզական ճանաչված մեկնաբան Ջամլեթ Խուխաշվիլին:

*Լուսանկարում.- Ջամլետ Խուխաշվիլին ստանում է մրցանակը*

ԳՈՐԾԱԴԻՐ

## 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԿԱՐԳԱՎՈՐՎԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

*Նոյեմբերի 19-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախագահությամբ, անցկացվեց երկրի գործադիր իշխանության հերթական նիստը:*

Նիստում Իրակլի Ղարիբաշվիլին կառավարության անդամներին հակիրճ տեղեկատվություն փոխանցեց նախօրեին անցկացված պետական անվտանգության եւ ճգնաժամերի կառավարման խորհրդի նիստի վերաբերյալ: Վարչապետի խոսքերով, ներկա փուլում երկրի համար առանձնակի սպառնալիքներ չեն վավերացվել: «Իրավիճակը մենք վերահսկում ենք եւ առավելագույնս է՛լ ավելի կխստացնենք ողջ երկրի մասշտաբով անվտանգության միջոցառումները: Ներկա փուլում մեր հատուկ ծառայությունները երկրի հա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ԶԱԶԱ ՎԱՇԱՂՄԱՁԵՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԵՆԵ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

*Նոյեմբերի 17-ին կրոնի հարցերով պետական գործակալության նախագահ Զազա Վաշաղմաձեն հանդիպում ունեցավ Ֆրանսիայի քաղաքացի, աստվածաբանության դոկտոր, Եվրասիայում Հայկական Ավետարանչական եկեղեցու ղեկավար Ռենե Լեւոնյանի հետ:*



Հանդիպմանը Զազա Վաշաղմաձեն հյուրին ներկայացրեց գործակալության գործառույթները, խոսեցին Վրաստանում, Ֆրանսիայում եւ Հայաստանում պետության ու կրոնի հարաբերությունների հարցերի վերաբերյալ:

Ռենե Լեւոնյանը, կրոնի ոլորտում ընթացիկ գործընթացների կապակցությամբ, իր կարծիքը հայտնեց գործակալության նախագահին եւ, անհրաժեշտության դեպքում, օգնության ու համագործակցության պատրաստակամություն հայտնեց:

Զազա Վաշաղմաձեն իր ցավակցությունը հայտնեց Փարիզում տեղի ունեցած ահաբեկչական գործողությունների կապակցությամբ:

Ռենե Լեւոնյանը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության եւ հետաքրքիր զրույցի համար:

Հանդիպմանը ներկա էր «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը:

ԻՐԱՎԱԿԱՆ

## ԻՐԱԿԼԻ ՇՈԹԱՁԵՆ ՄԻԱԿ ԹԵԿՆԱԾՈՒՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ



*Նոյեմբերի 19-ին Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանու գլխավորած դատախազական խորհուրդը, գաղտնի քվեարկությամբ, գլխավոր դատախազի առաջին տեղակալ Իրակլի Շոթաձեին ընտրեց Վրաստանի գլխավոր դատախազ: Խորհրդի 14 անդամներից 13-ը քննարկման ներկայացված երեք թեկնածուներից գերադասությունը տվեցին նրան: Հիմա այդ ընտրությունը ներկայացվելու է խորհրդարանի հաստատմանը:*

Մինչ այդ, Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին նախաձեռնող խմբերի կողմից ներկայացված ութ թեկնածուներից գլխավոր դատախազի թեկնածու էր առաջադրել գլխավոր դատախազի ներկայիս առաջին տեղակալ Իրակլի Շոթաձեի, իրավունքի դոկտոր, ասոցիացված պրոֆեսոր Նանա Ռեւազիշվիլու եւ փաստաբան Վլադիմիր Գաբրիչիձեի թեկնածությունները:

32-ամյա Իրակլի Շոթաձեն դատախազության համակարգում աշխատանքը սկսել է 2006 թվականին՝ գլխավոր դատախազության կադրային ապահովման դեպարտամենտի մասնագետի պաշտոնում: Ուղիղ երկու տարի առաջ՝ 2013 թվականի նոյեմբերի 21-ին, նշանակվել էր գլխավոր դատախազի առաջին տեղակալ: Այնպես որ, երկրի գլխավոր դատախազի պաշտոնում Իրակլի Շոթաձեն կփոխարինի իր նախկին ղեկավար, 34-ամյա Գիորգի Բադաշվիլուն:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

## ԸՆԴՈՒՆՎԵՑ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՍՏԱՑՄԱՆ ՈՐՈՇՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

լին, պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին, ճգնաժամերի կառավարման խորհրդի քարտուղար Մինդիա Ջանելիձեն, պետական անվտանգության ծառայության ղեկավար Վախթանգ Գոմելաուրին, ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, պետական պաշտպանության հատուկ ծառայության ղեկավար Անզոր Չուբինիձեն, հակահետախուզության դեպարտամենտի ղեկավար Դավիթ Սուջաշվիլին եւ պաշտպանության ու անվտանգության խորհրդարանական կոմիտեի նախագահ Իրակլի Սեսիաշվիլին:

Նիստի ավարտից հետո, Վրաստանի ՆԳ նախարար Գիորգի Մղեբրիշվիլին հայտարարեց, որ ընդունվել է որոշում սահմանային եւ ոստիկանության վերահսկողության խստացման վերաբերյալ: Պետական անվտանգության ծառայության ղեկավար Վախթանգ Գոմելաուրու խոսքերով, առավելագույն վերահսկողություն կսահմանվի, որպեսզի երկիրը չօգտագործվի տարանցիկության նպատակներով եւ Վրաստանի տարածքով կոնկրետ անձինք չհայտնվեն Սիրիայում:

Իր հերթին, պաշտպանության եւ անվտանգության խորհրդարանական կոմիտեի նախագահ Իրակլի Սեսիաշվիլին նշեց, որ մոտ ժամանակներում Վրաստանում կբացվի ճգնաժամերի կառավարման կենտրոն, որը հագեցված կլինի տեխնիկական արդի միջոցներով: «Այն մոտավորապես կլինի «կոբրայի» մոդելի եւ, ճգնաժամերի ու արտակարգ իրավիճակների դեպքում, արդյունավետորեն կգործի»,- հայտարարեց նա:

ԳՈՐԾԱԴԻՐ

## 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԿԱՐԳԱՎՈՐՎԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մար առանձնակի սպառնալիքներ չեն վավերացրել, թեպետ հարկ է լինել զգոն, անհրաժեշտ է շուրջօրյա աշխատանք եւ վերահսկողություն»,- հայտարարեց վարչապետը:



Անդրադառնալով կառավարության օրակարգի թեմային՝ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ 2017 թվականին աշխատավարձերի համակարգը պետք է կարգավորվի: Նրա խոսքերով, ոչ մի նախարար պարգեւադրամ չի ստանա: Վարչապետը «սպեկուլյացիա» որակավորեց տարածված տեղեկատվությունն այն մասին, որ տրված հավելավճարներն ու պարգեւադրամը, նախորդ տարիների համեմատությամբ, ավելացել են եւ ֆինանսների նախարար Նոդար Խադուրուն հանձնարարեց համապատասխան տեղեկատվություն տալ: «Երկու օր է, ինչ հետեւում եմ ԶԼՄ-ների տեղեկատվությանն այն մասին, իբր նախարարություններում տրվել են լրացուցիչ դրամապարգեւ եւ հավելավճար: Խնդրում եմ բնակչությանը կրկին անգամ տեղեկացնել, թե ինչ հավելավճարների ու պարգեւադրամների մասին է խոսքը: Ոչ մի նախարար պարգեւադրամ չի ստանում, նախարարի աշխատավարձը 5 հազար լարի է, եւ դա գաղտնիք չէ»,- հայտարարեց վարչապետը:

Ինչ վերաբերում է աշխատավարձերին, ապա Իրակլի Ղարիբաշվիլու պարզաբանմամբ, այն կավելացվի միայն զինծառայողների, ոստիկանության, մանկավարժների եւ բժիշկների համար: Տեղեկատվությունն այն մասին, թե իբր կառավարությունը բարձրացրել է իր աշխատավարձը, բացահայտ կեղծիք է: Բնակչությանը դրանով նպատակամղվածորեն թյուրիմացության մեջ են գցում»,- նշեց կառավարության ղեկավարը եւ հավելեց, որ 2017 թվականին աշխատավարձի համակարգը կկարգավորվի:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՇԱՏ ԱՆԵԼԻՔՆԵՐ ՈՒՆԵՆՔ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

յում: Վարչապետը առանձնակի ընդգծեց այցեգրային պայմանակարգի ազատականացման կարեւորությունը: «Վրաստանի կառավարությունը ջանքեր չի խնայում այցեգրային պայմանակարգի ազատականացման գործողության ծրագրի աստիճանական իրականացման համար: Հուսով եմ, որ մեր ձեռքբերումները արժանվույնս կգնահատվեն եւ դրական արտացոլում կգտնեն Եվրամիության գնահատականում, ինչը մեր քաղաքացիների համար կհանգեցնի եվրոպայում երթեւեկության անայցեգրային պայմանակարգը»,- ընդգծեց Վրաստանի վարչապետը եւ հավելեց, որ Վրաստանի քաղաքացիների համար դա փաստացի վկայություն կդառնա, որ երկրի համար եվրոպական ընտրությունը կոնկրետ արդյունքներ է տալիս:

Իր հերթին, արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով Եվրամիության գերագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին նշեց, որ Վրաստանը լուրջ առաջընթաց ունի Եվրամիության հետ այցեգրային պայմանակարգի ազատականացման հարցում: «Մենք ողջունում ենք այն փաստը, որ Վրաստանը հաջողության է հասել այցեգրային պայմանակարգի ազատականացման գործողությունների ծրագրում նախատեսված նպատակները աստիճանաբար նվաճելու գործում, թեպետ առաջիկայում աշխատանքները շատ են»,- հայտարարեց Մոգերինին:

ՏԵՌՈՐ

# ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՍՊԱՌՆԱԼԻՔ

## ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶՈՀԵՐՈՎ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ՓԱՐԻԶՈՒՄ

Նոյեմբերի 13-ի երեկոյան, Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում, միաժամանակ ահաբեկչություններ են տեղի ունեցել քաղաքի 6 տարբեր վայրերում: Ահաբեկչության հետեւանքով զոհվել է 129, վիրավորվել՝ 352 մարդ: Անհայտ անձինք կրակ են բացել ռեստորաններից մեկում, երեք պայթյուն է որոտացել «Ստադ դե Ֆրանս» մարզադաշտի անմիջական մերձակայքում, որտեղ ընթանում էր Ֆրանսիայի ու Գերմանիայի ֆուտբոլի հավաքականների ընկերական մրցախաղը, եւ որին ներկա էր Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը: Բացի այդ, անհայտ անձինք սպանդ են սարքել «Բատակլան» թատրոնում, ռոք-համերգի ժամանակ:

Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը երկրի պատմության մեջ խոշորագույն ահաբեկչության առնչությամբ 3-օրյա ազգային սուգ էր հայտարարել:

Ֆրանսիայի խորհրդարանը նոյեմբերի 19-ին հավանություն է տվել Փարիզում կատարված ահաբեկչական գործողությունների կապակցությամբ երկրում սահմանված արտակարգ դրության ռեժիմը երեք ամսով երկարացնելու վերաբերյալ օրինագծին:

Ֆրանսիայի դատախազության տեղեկատվությամբ, նոյեմբերի 13-ին Փարիզում կատարված ահաբեկչական գործողությունների ենթադրյալ կազմակերպիչը՝ Աբդել Համիդ Աբաուդը, սպանվել է Ֆրանսիայի մայրաքաղաքի Սեն Դենի արվարձանում իրականացված ոստիկանական հատուկ գործողության ընթացքում:

## 50 ՄԼՆ ԴՈԼԱՐ՝ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ռուսական հատուկ ծառայությունները 50 մլն դոլարի պարգեւատրում են խոստացել A321 ինքնաթիռի ահաբեկչության հետ կապ ունեցողների մասին տեղեկատվության համար:

Հիշեցնենք, որ ավելի վաղ, Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության ղեկավար Ալեքսանդր Բորտնիկովը հաստատել էր Սինայի թերակղզում կործանված A321 ռուսական ինքնաթիռում ահաբեկչության փաստը:

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինն այս առնչությամբ հայտարարեց, որ ռուսական ինքնաթիռը պայթեցրած ահաբեկիչներին կգտնեն մոլորակի ցանկացած կետում ու կպատժեն: Նա հավելեց, որ նրանք, ովքեր կփորձեն աջակցել հանցագործներին, պետք է իմանան, որ բոլոր հետեւանքները կընկնեն նրանց ուսերին:

Հիշեցնենք, որ Շարմ էլ Շեյխ-Սանկտ Պետերբուրգ չվերթն իրականացնող ինքնաթիռը կործանվել է հոկտեմբերի 31-ին Սինայի թերակղզու օդային տարածքում, թռիչքից 23 րոպե անց: Հայտնի է, որ 217 ուղեւորով եւ 7 հոգանոց անձնակազմով ինքնաթիռը պայթել է օդում:

## ՈՐՔԱՆ՞Վ Է ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԱԿՏԸ ՄԵՐ ԵՐԿՐՈՒՄ

### ՎՐԱՍՏԱՆԸ ԵՐԿԱԿԻ ՀԱՐՎԱԾԻ ՏԱ՞Կ

***Նոյեմբերի 13-ը յուրատեսակ շրջադարձային դարձավ ողջ հանրության համար: Փարիզում տեղի ունեցած ահաբեկչական գործողություններից հետո, որին զոհ դարձավ 129 մարդ, վիրավորվեցին հարյուրավոր մարդիկ, ահաբեկչական գործողությունների անցկացման հնարավորության մասին խոսեցին շատ երկրներում, այդ թվում՝ նաեւ Վրաստանում: Թեպետ նշվում է նաեւ, որ այսպես կոչված Իսլամական պետության եւ ահաբեկչական մյուս խմբավորումների համար նշանակալիցը առավել խոշոր եվրոպական, բնականաբար, նաեւ ԱՄՆ-ի քաղաքներում խուճապի առաջացումն է, որպեսզի ողջ աշխարհին ցույց տան, որ իրենք ի վիճակի են մարտահրավեր նետելու «այս աշխարհի հզորներին», իսկ Վրաստանը երկրորդական նշանակություն ունի:***

Փորձագետների մեծ մասի համոզմամբ, ծայրահեղ իսլամիստների համար Վրաստանն այսօր առաջնահերթ թիրախ չէ, թեպետ միաժամանակ նշվում է, որ դա ինքնահանգստացման պատճառ չպետք է լինի: Բանն այն է, որ, ցավոք, Վրաստանի անվտանգության ծառայությունները չեն կարողանում լրիվությամբ վերահսկել երկրի սահմանները, չեն կարողանում նույնականացնել սահմանը հատած անձանց, պարզել նրանց ով լինելը: Հանուն արդարության նշենք, որ դա հիմնախնդրային է ոչ միայն Վրաստանի, այլեւ շատ ավելի զարգացած երկրների համար: Սակայն, որքան էլ տարօրինակ լինի, չնայած վերոնշյալին, Վրաստանը կարող է հայտնվել երկակի հարվածի տակ:

Վերլուծաբան Նիկա Լալիաշվիլու կարծիքով, երկիրը գտնվում է «երկու կրակի արանքում»: Մի կողմից, իսլամական, այսինքն՝ վահաբիստների եւ ահաբեկչական մյուս կազմակերպությունների կողմից հնարավոր սպառնալիքը, եւ մյուս կողմից՝ Ռուսաստանը, որը, օգտվելով ստեղծված իրավիճակից, ահաբեկչության դեմ պայքարի դրոշի ներքո, կարող է ակտիվ գործողությունների դիմել Հյուսիսային Կովկասում: Բացառված չէ, որ այսօր Սիրիայում կռվողներից որոշակի մասի համար Վրաստանում հայտնվելու դժվարություններ չեն ծագի: Գաղտնիք չէ, որ Վրաստանի տարածքից՝ Պանկիսիից, Քվեմո Քարթլիից, Աջարիայից, մյուս բարձրալեռ տարածաշրջաններից, կրոնական հայացքներից ելնելով կամ իսլամիստների կողմից հավաքագրված, Վրաստանի շատ քաղաքացիներ ակտիվորեն մասնակցում են մերձարեւելյան հակամարտությանը, եւ այսօր, երբ այսպես կոչված Իսլամական պետության դեմ պայքարի համար հզոր պետությունների կոալիցիայի կազմավորումը թեւակոխել է գործնական փուլ, շատերը գերադասում են դասալքվել եւ ինչ-որ կերպ ապաստանել այնպիսի երկրներում, որտեղ կարող են «հանգիստ» ապրել: Եթե նմանները վերադառնան Վրաստան, ապա մենք դրա դեմ ոչինչ չենք կարող անել»,- ասել է փորձագետը:

Հատկանշական է, որ մոտավորապես նման եզրակացության է հանգել նաեւ Էկոնոմիկայի եւ խաղաղության Ինստիտուտը (Institute for Economics and Pefce) «Vision of Humanitu» կայքում հրապարակած Ահաբեկչության գլոբալ ինդեքսի (Global Terrorism Index 2015) երրորդ հաշվետվությունում: Այդ աղյուսակում Վրաստանը՝ իր 2,373 միավորով, զբաղեցնում է ահաբեկչության առավել բարձր հավանականության երկրների շարքում՝ 71-րդ տեղում: Ադրբեջանը՝ 1,381 միավորով, 93-րդն է: Առավել անվտանգ երկրների շարքում է հայտնվել Հայաստանը: Այն 0,115 միավորով Խորվաթիայի հետ գտնվում է պակաս վտանգավոր եւ ընդհանրապես անվտանգ «կանաչ գոտու» երկրների սահմանագծում:

Հարկ է նշել, որ տարածաշրջանային երկրներից ամենավտանգավոր գոտում հայտնվել են Ռուսաստանը (6,207 միավոր, 23-րդ տեղում, աղյուսակի «կարմիր գոտի»), Թուրքիան (5,737 միավոր, 27-րդ տեղում, «նարնջագույն գոտի»), Իրանը (4,222 միավոր, 39-րդ տեղում, «նարնջագույն գոտի»):

Աղյուսակը 10 միավորով «գլխավորում է» Իրաքը:

## Ի՞ՆՉ Է, ՆՐԱՆՔ ՄԱՐԴԻԿ ՉԷ՞ԻՆ

### ՍՊԱՆԴ ՔԵՆԻԱՅՈՒՄ



*Լուսանկարում սարսափելի տեսարան է՝ այստեղ պատկերված են Քենիայի (Արեւելյան Աֆրիկա) քրիստոնեական դպրոցում սպանված 217 ունկնդիրներ: Նրանք բոլորը վերջերս, 2015 թվականի ապրիլին, դարձան ծայրահեղական իսլամիստ ահաբեկիչների զոհը:*

*Տեղի ունեցածի մասին ԶԼՄ-ները կամ մարդու իրավունքների պաշտպան միջազգային ու տեղական կազմակերպությունները որեւէ արտահայտություն արե՞լ են, այս կապակցությամբ ո՞ր երկրում եւ ովքե՞ր են ծաղիկներ ու ծաղկեպսակներ բերել կամ մոմեր վառել Քենիայի դեսպանությունների մոտ: Եվ, ընդհանրապես, մենք տեղի ունեցածի մասին իմացե՞լ էինք:*

*Ինչո՞ւ ենք, ցավակցելիս նույնիսկ, խտրական մոտեցում ցուցաբերում: Ուրեմն, ի՞նչ, մարդկանց մի մասը արժանի է մեր ցավակցությանն ու աջակցությանը, իսկ մյուսները՝ ո՞չ...*

ՖԻՆԱՆՍՆԵՐ

# ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԵՐԿՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ԲՅՈՒՋԵԻ ԾՐԱԳՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Ընթացիկ տարվա պետբյուջեում մուտքերը նվազեցվում են 155 միլիոն լարիով եւ, ընդհանուր առմամբ, կկազմեն 9745 միլիոն լարի: Դա նախատեսված է պետբյուջեի փոփոխման նախագծում, որը կառավարությունը ներկայացրել է խորհրդարանի հաստատմանը:*

Ինչպես պարզաբանեցին գործադիր իշխանությունում, ելնելով տնտեսական եւ ֆինանսական պարամետրերից, 2005 թվականի 9-10 ամիսների ընթացքում, հնարավոր դարձավ կարգավորել բյուջեի մուտքերը եւ միջոցները բաշխել ըստ բյուջետային ծախսման կարիքների:

Հենվելով 2015 թվականի 9-10 ամիսների փաստացի տվյալների վրա, հաշվի առնելով տնտեսական աճի կանխագծումները եւ հարկային մուտքերի դինամիկան՝ հարկային մուտքերի կանխագծումն ավելացվել է 120 միլիոն լարիով, եւ կանխագծման հիման վրա այն կազմելու է 7520 միլիոն լարի: 45 միլիոնով ավելացվում է նաեւ սեփականաշնորհումից ստացվող մուտքերը: Կառավարության պարզաբանմամբ, մյուս մուտքերը հստակեցվում են՝ ելնելով դրանց կատարման միտումից:

Պետական պարտքի ստացման ցուցանիշը նվազեցվում է 293 միլիոն լարիով: Ընդհանուր առմամբ, բյուջետային մուտքերը պետպարտքի հաշվին նվազեցվում են 155 միլիոնով եւ կկազմեն 979745 միլիոն լարի: Բացի այդ, փոփոխություններ են ծրագրվում նաեւ հարկային հատվածում, այն ավելացվելու է 30 միլիոնով եւ, ընդհանուր առմամբ, կկազմի 9605 միլիոն լարի: Ինչպես հայտարարեցին կառավարությունում, դա հիմնականում պայմանավորված է լրացուցիչ ռեսուրսների ներդրման անհրաժեշտությամբ՝ ուղղված համընդհանուր առողջապահության ծրագրի անխափան իրականացմանը:

# ԹԲԻԼԻՍԻԻ ԲՅՈՒՋԵՆ ԱՎԵԼԱՑՎԵՑ 65 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻՈՎ

*Ինչպես հայտարարեց Թբիլիսիի սակրեբուլոյի բյուջետաֆինանսային հանձնաժողովի նախագահ Ջաբա Սամուշիան, մայրաքաղաքի 2016 թվականի բյուջեն ավելացվել է 65 միլիոն լարիով:*

Նրա խոսքերով, նոյեմբերի 13-ին քաղաքապետարանը սակրեբուլոյի հաստատմանն է ուղարկել Թբիլիսիի 2016 թվականի բյուջեի նախագիծը: Սամուշիայի խոսքերով, ընդհանուր առմամբ, բյուջեում հաշվարկված է 810 միլիոն լարի: Լրացուցիչ 65 միլիոն լարին ծախսվելու է մայրաքաղաքի տրանսպորտային ենթակառույցի բարեկարգման համար: Մասնավորապես, անմիջականորեն տրանսպորտի համար կծախսվի 19 միլիոն լարի, վքարային շենքերի վերանորոգման եւ շինարարության համար՝ 29 միլիոն լարի, առողջապահության նպատակներով կծախսվի 9 միլիոն, իսկ կրթության համար՝ 3 միլիոն լարի:

Ջաբա Սամուշիայի խոսքերով, հաջորդ տարվա համար ծրագրվում է Թբիլիսիի մետրոկայարանների վերանորոգում: Կկարգավորվեն նաեւ Մթածմինդայի զբոսայգի եւ Կրիայի լիճ տանող ճոպանուղիները: Դրա համար առանձնացվել է 7 միլիոն լարի: Պուշկինի փողոցի վրա ծրագրվում է կառուցել երկկողմանի երթեւեկության ճանապարհ: Սամուշիայի խոսքերով, կազմակերպություններից մեկին հանձնարարվել է կազմել տրանսպորտային խցանումներից խուսափելու ծրագիր: Այդ ծրագրի հիման վրա կկանխագծվեն նոր ճանապարհների կամ նոր թունելների կառուցման նախագծերը: Ծրագրվում է նաեւ 9 նոր մանկապարտեզների շինարարություն:

ՎՐԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՋԱՆՔԵՐՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



*Չեխիայի մայրաքաղաքում անցկացվեց Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցերով Վրաստանի վարչապետի հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեի եւ Ռուսաստանի ԱԳ փոխնախարար Գրիգորի Կարասինի հերթական հանդիպումը:*

Ինչպես հանդիպման ավարտից հետո նշեցին բանակցող կողմերը, համատեղ ջանքերով նշանակալից քայլեր են իրականացվել երկկողմ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Մասնավորապես, տեղաշարժեր են նկատվել առեւտրատնտեսական, տրանսպորտային, մշակութային եւ այլ ոլորտներում: Թեպետ, ինչպես նշվեց, երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների բանակցությունը լուրջ արգելքներ է հարուցում այցեգրային պայմանակարգի կարգավորման գործընթացում:

Պրահայում անցկացված հանդիպմանը կողմերը քննարկել էին առեւտրատնտեսական, տրանսպորտային, մասնավորապես, Վերին Լարսի անցումակետի շուրջօրյա աշխատակարգի, ինչպես նաեւ քաղաքացիների առանձին կատեգորիաների համար այցեգրային պայմանակարգի դյուրացման հետ առնչվող հարցեր:

ՆՈՐՈՒՅԹ

# ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՑԵԼ Է ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

*Վրաստանի խորհրդարանը, երրորդ ընթերցմամբ, ընդունեց փոփոխությունները «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին», «Ձեռներեցության մասին» եւ «Դրամաշնորհների մասին» Վրաստանի օրենքներում:*

«Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» Վրաստանի օրենքի նոր խմբագրություններում սահմանվել են սահմանափակումներ՝ կապված կոոպերատիվների անդամների կողմից չթողարկած գյուղմթերքների եւ նրանց կողմից մատուցած ծառայությունների գնումների գործում: Դա նշանակում է, որ կոոպերատիվների անդամ չհանդիսացող սուբյեկտների կողմից թողարկած մթերքների եւ մատուցած սպասարկումների արժեքը չպետք է գերազանցի կոոպերատիվների գյուղատնտեսական ապրանքաշրջանառության տարեկան ծավալի 30 տոկոսը:

Հստակություն մտցվեց նաեւ գյուղատնտեսական կոոպերատիվների պահուստային հիմնադրամում առկա դիվիդենտների եւ կանխիկ գումարների ծախսման ընթացակարգում: Օրենքի նոր խմբագրության համաձայն, փայատերերի ռեեստրում պարտադիր գրանցման կարգը հետայսու սահմանվելու է գյուղատնտեսության նախարարի հրամանագրով: Օրենքում կիրարկված արտահայտություններին ավելացվել են «լրացուցիչ բաժնետիրական անդամավճար» եւ «կոոպերատիվ եկամուտ» հասկացությունները:

Ինչ վերաբերում է «Դրամաշնորհների մասին» օրենքում կատարված փոփոխությանը, ապա դա նախատեսում է գյուղատնտեսական կոոպերտիվների զարգացման գործակալությանը վերապահել դրամաշնորհներ հանձնելու իրավասություն:

Գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման գործակալությունում հայտարարեցին, որ վերոնշյալ օրենքում փոփոխությունները ծառայում են կոոպերատիվների մոդելի կատարելագործմանն ու բաժնետերերի միջեւ արտադրական հարաբերությունների կարգավորմանը:

ԴԱՏԱԿԱՆ

# ՆՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ՝ ՎԱՆՈ ՄԵՐԱԲԻՇՎԻԼՈՒ ԵՎ ԶՈՒՐԱԲ ԱԴԵԻՇՎԻԼՈՒ ԴԵՄ

*Վրաստանի գլխավոր դատախազությունը նոր մեղադրանքներ է առաջադրել երկրի՝ բանտարկության մեջ գտնվող ներքին գործերի նախկին նախարար Վանո Մերաբիշվիլուն եւ արդարադատության նախկին նախարար Զուրաբ Ադեիշվիլիուն:*

Գլխավոր դատախազության ներկայացուցիչը նոյեմբերի 16-ին հայտարարեց, որ այս անգամ «հետաքննությունը պնդում է, որ Ադեիշվիլին եւ Մերաբիշվիլին 2004 թվականին ստիպել են վրացի երկու գործարարներին՝ Թեյմուրազ Մեգրելիշվիլուն եւ Զուրաբ Մոդեբաձեին, զիջել Կախեթիի տարածաշրջանի Թելավի քաղաքում գտնվող «Ակուրա» գինու գործարանը»:

Քրեական գործ է հարուցվել «ծառայողական լիազորությունների վերազանցում» հոդվածով, որը բանտային պատիժ է նախատեսում 3-ից մինչեւ 5 տարի ժամկետով:

Հիշեցնենք, որ Վանո Մերաբիշվիլին եւ Զուրաբ Ադեիշվիլին Վրաստանի նախկին նախագահ, ներկայումս Ուկրաինայի Օդեսայի մարզի նահանգապետ Միխեիլ Սաակաշվիլու թիմի անդամներն են: 2012 թվականին Վրաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո նրանց,



մի խումբ այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ միասին, մեղադրանքներ էին առաջադրվել մի շարք քրեական գործերի գծով: Մերաբիշվիլին բանտարկված է Թբիլիսիում, իսկ Ադեիշվիլին բնակվում է Ուկրաինայում եւ կոնսուլտացիաներ է տրամադրում Ուկրաինայի կառավարությանը:



## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ 100 ՀԱԶԱՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



*Թբիլիսիում հարյուրավոր հավատացյալներ հավաքվեցին Մետեխիի կամրջի մոտ, որտեղ հարգանքի տուրք մատուցեցին 800 տարի առաջ՝ 1226 թվականին, պարսիկների կողմից նահատակված 100 հազար քրիստոնյաների հիշատակին:*

*Հավատացյալները պատմական կամրջի մոտ բերեցին ծաղիկներ ու մոմեր, իսկ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը մատուցեց հոգեհանգստի պատարագ: Արարողության ավարտից հետո, ավանդույթի համաձայն, ի հիշատակ նահատակների, գետը նետեցին ծաղիկները: Կրոնափոխումից հրաժարվելու համար, 100 հազար նահատակներ զոհվեցին Խորիզմի սուլթան Ջալալ Էդ Դինի Վրաստան կատարած արշավանքի ժամանակ: Նա Սիոնի տաճարից հրամայեց դուրս բերել Սուրբ Աստվածամոր եւ Քրիստոսի սրբապատկերները եւ ժողովրդից պահանջեց դրանք ոտնատակ անել, մարդիկ հրաժարվեցին՝ գերադասելով դառնալ նահատակներ:*

## ԹՈՆԻ ԲԼԵՐԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

*Նոյեմբերի 18-ին, Վրաստանի կառավարության ղեկավարի հրավերով, Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Թոնի Բլերը մի քանի ժամով այցելեց Թբիլիսի: Նրան ընթրիքի շուրջ ընդունեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին: Հանդիպմանը քննարկվեցին Վրաստանում իրականացվող ժողովրդավարական բարեփոխումները, աշխարհի ու տարածաշրջանի իրադրությունը: Թոնի Բլերը եւ Իրակլի Ղարիբաշվիլին բարձրացան ֆունիկուլյոր եւ դիտեցին Թբիլիսիի տեսարժան վայրերը:*

*Հանդիպման ավարտից հետո, Բլերը մեկնեց Վրաստանից:*

## ՓԱՍՏԱԲԱՆԻՆ ԾԵԾԵՑԻՆ... ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ

*Իրավապաշտպան կազմակերպությունների տարածած հաղորդակցության համաձայն, նոյեմբերի 8-ի առավոտյան, փաստաբան Գիորգի Մդինարաձեն ծեծի է ենթարկվել ոստիկանների կողմից Թբիլիսիի Վակե-Սաբուրթալոյի ոստիկանության բաժանմունքում: Ինչպես նշում է փաստաբանը, ծեծին մասնակցել է հինգ ոստիկան: Դատախազությունը փաստաբանի ծեծի փաստով ձերբակալել է Վակե-Սաբուրթալոյի վարչության 5-րդ բաժանմունքի պետ Լաշա Կվիրկվաիային: Թեպետ, ինչպես նշում է տուժողը, միայն այդ ձերբակալությամբ դատախազությունը չպետք է բավարարվի եւ պատասխանատվության ենթարկի նաեւ մյուս մասնակիցներին:*

*Հետաքննությունը շարունակվում է:*

## ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՆՈՏԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

*Սկսվել է նոտարների համար որակավորման քննությունը, որ անցկացվելու է երկու փուլով: Նոյեմբերի 13-14-ին անցկացված առաջին փուլը ընդհանուր ունակությունների թեստավորումն էր, իսկ նոյեմբերի 20-21-ին անցկացվելիք փուլը մասնագիտական թեստավորումն է լինելու:*

*Ինչպես տեղեկացրին Վրաստանի նոտարական պալատում, որակավորման քննությունների անցկացումը պարտադիր պայման է նոտարների նշանակման համար:*

ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

# ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՀՊԱՐՏ ԵՆՔ, ՈՐ ՀԻՄՆԵՑԻՆՔ ԲՈԼՈՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴԵՊ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

անցկացրին երկրում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի կրոնական տարբեր ուղղությունների եւ ազգային փոքրամասնությունների, միջազգային եւ տեղական ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների ընդունելություն:

Հանդիպմանը մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգանքի տուրք մատուցեցին նոյեմբերի 13-ին Փարիզի ահաբեկչական գործողությունների արդյունքում զոհվածների հիշատակին:



Ընդունելությանը Գիորգի Մարգվելաշվիլին իր խոսքում, անդրադառնալով տեղի ունեցած ողբերգությանը, հայտարարեց, որ նման պայմաններում առավել նշանակալից է դառնում առաջադեմ ուժերի միավորումը, որպեսզի համատեղ ջանքերով պատասխանենք ագրեսիային եւ ահաբեկչությանը: «Կրկին անգամ ցանկանում եմ ընդգծել, որ մեզ համար ահաբեկչությունն ու բարբարոսությունը կրոնի եւ իսլամի հետ չի ասոցիացվում: Մեզ համար իսլամը չի ասոցիացվում այն սարսափների հետ, ինչ այսօր տեղի է ունենում Սիրիայում եւ այն, ինչ տեղի ունեցավ Ֆրանսիայում»,- հայտարարեց Վրաստանի նախագահը եւ հավելեց. «Մենք ապրում ենք այնպիսի երկրում, որը տարբերվում է հանդուրժողականության երկարատեւ եւ վեհ պատմությամբ: Մենք՝ վրացիներս, հպարտանում ենք նրանով, որ կարողացանք ու պատմության ընթացքում հիմնեցինք բազում կրոնների եւ բազում էթնոսների հետ համակեցության նախադեպ»:

Վրաստանում ԱՄՆ դեսպան Յան Քելլին իր խոսքում առանձնակի ընդգծեց այն գաղափարը, որ Վրաստանը հզոր է իր բազմերանգությամբ: «Հանդուրժողականությունը եւ ազգային ու կրոնական տարբեր ուղղությունների ներկայացուցիչների ներդրումը, օրինակելի է դարձրել Վրաստանը ողջ աշխարհի ու տարածաշրջանի համար: Կարծում եմ, որ «Հանդուրժողականության միջազգային օրը» լավ առիթ է խորհելու, թե ինչպես կարող ենք հասնել հաղթանակի եւ նպաստել հանդուրժողականության տարածմանը: Չէ՞ որ Վրաստանի օրինակով ակնհայտ է, որ բազմերանգությունը նրա առաջընթացի հիմքն է»,- ընդգծեց դեսպանը:

Նախագահի նստավայրում կազմակերպված ընդունելության մասնակիցներին տրվեց Վրաստանում առկա էթնիկ եւ կրոնական բազմերանգության նկարագրմանը նվիրված եւ հանդուրժողականության ու բազմերանգության ինստիտուտի եւ Հոլանդիայի դեսպանության աջակցությամբ կազմակերպված վրաստանցի լուսանկարիչներ Լեւան Խերխեուլիձեի, Նաթելա Գրիգալաշվիլու, Սերգո Ֆիդանյանի, Շահ Այվազովի եւ մյուսների լուսանկարների ցուցահանդեսը դիտելու հնարավորություն: Ընդունելությանը ելույթ ունեցան նաեւ Վրաստանում Հոլանդիայի դեսպան Յոշ Դուման, հանդուրժողականության եւ բազմերանգության ինստիտուտի հիմնադիր Նինո Ցինցաձեն, Վրաստանի Պատրիարքության ներկայացուցիչ, վարդապետ Ալեքսանդրե Գալդավան, Վրաստանի Ավետարանչական-բապտիստական եկեղեցու եպիսկոպոս Մալխազ Սոնղուլաշվիլին եւ ազգային փոքրամասնության ներկայացուցիչ Լիլի Սաֆարովան:

# ԴԱՎԻԹ ՆԱՐՄԱՆԻԱ. «ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆԿԱՊՏԵԼԻ ՄԱՍՆ Է»

*Հանդուրժողականության միջազգային օրվա առթիվ, Թբիլիսիի քաղաքապետարանում անցկացվեց հանդիսավոր միջոցառում, որին ներկա էին քաղաքապետ Դավիթ Նարմանիան, Թբիլիսիի սակրեբուլոյի նախագահ Գիորգի Ալիբեգաշվիլին, սակրեբուլոյի պատգամավորները, Վրաստանի գործադիր ու օրենսդրական իշխանության ներկայացուցիչներ, ազգային փոքրամասնությունների ու ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ:*



Ելույթ ունենալով միջոցառմանը՝ Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիան ներկաներին շնորհավորեց «Հանդուրժողականության միջազգային օրվա» առթիվ: «Սկսած 1995 թվականից մինչ օրս, աշխարհի տարբեր ազգային, էթնիկական, կրոնական պատկանելության մարդիկ միմյանց բարձրաձայն հիշեցնում են փոխադարձ հարգանքի, բարօրության, լոյալության եւ փոխադարձ սիրո այս կարեւորագույն սկզբունքի մասին, որը հանդուրժողականություն է կոչվում: Հանդուրժողականությունը մեր մշակույթի անկապտելի մասն է, այն հիմնում է այնպիսի հասարակություն, որտեղ յուրաքանչյուր մարդ իրեն կարող է զգալ ազատ ու արժանապատիվ: Թբիլիսին հնուց ի վեր աչքի էր ընկնում իր բազմազգությամբ եւ կրոնական բազմերանգությամբ: Դարեր շարունակ Թբիլիսիի կենտրոնում իրար կողքկողքի են գտնվել ուղղափառ եկեղեցին, սինագոգը, հայկական տաճարը եւ մահմեդական մզկիթը: Մեր պարտքն է պահենք ու ապագա սերունդներին հանձնենք այս թանկարժեք ավանդույթը»,- հայտարարեց Դավիթ Նարմանիան:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# «ՄԵԶ ՀԱՄԱՐ ՆՇԱՆԱԿԱԼԻՑԸ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈՒՂԵՎՈՐԻ ՀԱՐՄԱՐԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ Է»

*«Վրացական երկաթուղում» շատ նորամուծություններ են ներդրվել ուղեւորների սպասարկման որակի բարձրացման տեսանկյունից: Այդ փաստը վավերացնում են բոլոր այն քաղաքացիները, ովքեր հաճախ են օգտվում երկաթուղու սպասարկումներից, իսկ նրանց թիվը բավականին մեծ է, քանի որ երկաթուղային տրանսպորտի տոմսերը բավականին էժան են:*

*Թե կոնկրետ ի՞նչ նորամուծությունների մասին է խոսքը, եւ ի՞նչ ծրագրեր են նախատեսված առաջիկայի համար, մեր թերթի թղթակցի խնդրանքով, պատմում է «Վրացական երկաթուղու» սպասարկումների որակի զարգացման ծառայության ղեկավար Դաչի Ցագուրիան:*



***- Տարիներ շարունակ Վրաստանի ուղեւորատար գնացքներում իրավիճակը շատ հեռու էր բավարար լինելուց: Ներկայումս այդ հարցում նորամուծությունները դարձել են նկատելի: Կոնկրետ ի՞նչ էր արվում սպասարկման որակի բարելավման ուղղությամբ:***

- Թեպետ վրացական երկաթուղին հիմնական եկամուտը ստանում է բեռնափոխադրումներից, իսկ ուղեւորափոխադրումները իրականացվում են լրացուցիչ ներդրումների հաշվին, մենք ջանքերը չենք խնայում, որպեսզի մեր ուղեւորներին ապահովենք առավելագույն հարմարավետությամբ, եւ ուղեւորությունը հնարավորինս հաճելի դարձնենք:

Մենք ներդրել ենք վագոնների մաքրման նոր համակարգ, որը տարբերվում է նրանով, որ ներդրած արդի տեխնիկան վագոնները մաքրում է 180 աստիճան տաքության գոլորշիով, ինչը դուրս է մղվում մեծ ճնշման տակ: Նախկինում վագոնները արտաքինից լվանում էին օճառով, իսկ հիմա մենք վերականգնել ենք ԽՍՀՄ փլուզումից հետո պարապուրդի մատնված վագոնների լվացման արտադրամասը:

Միաժամանակ, մեզ համար նշանակալից է մատուցվող սպասարկումների որակի բարելավումը: Այդ նպատակով, մենք համաձայնագիր ենք կնքել Իլիայի համալսարանի բիզնես դպրոցի հետ կադրերի նախապատրաստման համար: Ուղեկցողների տոմսարկղերի աշխատողները, օպերատորները, բոլոր նրանք, ովքեր անմիջականորեն առնչվում են ուղեւորների հետ, անցնում են հատուկ վարժանքներ:

Բացի այդ, տարիներ շարունակ չէին գործում կայարաններում տեղեկատվական վահանակները, հետեւաբար, ուղեւորները չէին ստանում տեղեկատվություն այն մասին, թե որ երկաթուղային վանդակում եւ քանի րոպեից հետո է գալու գնացքը: Մենք ձեռք բերեցինք հատուկ սարքավորումներ, որոնք արդեն տեղակայել ենք Վրաստանի 18 հիմնական կայարաններում:

Սպասարկման որակի առավելագույն բարձրացման նպատակով, մենք դյուրացրել ենք տոմսերի գնման համակարգը: Ինչպես գիտեք, ամռանը ուղեւորների հոսքը կտրուկ աճում է, որի արդյունքում, տոմսարկղերի մոտ առաջանում են հերթեր, ծագում դիմակայություններ, վեճեր, թե ով է եկել առաջինը, ով-ում հետեւից է կանգնած եւ այլն: Իրավիճակի կարգավորման նպատակով, ներդրեցինք նոր հերթերի կարգավորման ավտոմատացված համակարգ, ինչը բավականին լիցքաթափեց իրավիճակը:

Մենք բավականին աշխատանք կատարեցինք նաեւ օնլայն համակարգով տոմսերի գնումը դյուրինացնելու ուղղությամբ:

Հարկ է նաեւ նշել, որ միջազգային ուսումնասիրությունների արդյունքներով, էժանության առումով, Վրաստանում երկաթուղային տոմսերը համաշխարհային լիդերների թվին են պատկանում, իսկ Եվրոպայում այն առաջինն է: Կախված նրանից, թե ինչ ուղղությամբ գնացքի համար է գնվում տոմսը, արժեքը տատանվում է 1-ից մինչեւ 55 լարի: Ավելին, մենք ներդրել ենք տասամսյա արտոնություն, ըստ որի, տարվա ընթացքում տասը ամսվա հաշվով 40 լարի արժողության երկաթուղային տոմսը կարելի է գնել 25 լարիով, իսկ 23 լարիանոցը՝ 18 լարիով: Ինչպես տեսնում եք, մենք առավելագույնս փորձում ենք համատեղել բարձր որակն ու ցածր գները:

***- Մի քանի խոսք՝ մեր թերթի ընթերցողներին հետաքրքրող հարցի մասին: Խոսքը Թբիլիսի-Երեւան ուղեւորատար գնացքի մասին է:***

- Միանգամից ասեմ, որ Թբիլիսի-Երեւան երթուղին գտնվում է հայաստանյան «Հարավային երկաթուղի» ընկերության տնօրինության տակ: Ուղերթի գնացքաշարի տեխնիկական վիճակի պատասխանատվությունը, սպասարկման անձնակազմի կազմավորումը իրականացնում է հայկական կողմը: Թեպետ, ի պատիվ հայ գործընկերների, պետք է ասեմ, որ այդ երթուղում ներառված թե՛ տեխնիկական միջոցների եւ թե՛ սպասարկող անձնակազմի աշխատանքը արժանի է բարձր գնահատականի:

Ինչ վերաբերում է Երեւան-Թբիլիսի ուղեւորատար գնացքին, ավելացնեմ, որ Թբիլիսիից այն մեկնում է ամսվա կենտ օրերին, ժամը՝ 20:20-ին եւ Երեւան է հասնում առավոտյան ժամը 07:00-ին: Երեւանից գնացքը դուրս է գալիս զույգ օրերին: Ինչ վերաբերում է տոմսերի գներին, ապա կուպեի արժեքը կազմում է 87 լարի 62 թեթրի, պլացկարտը՝ 58 լարի 50 թեթրի, իսկ ննջավագոնինը (CB)՝ 105 լարի 66 թեթրի: Եթե հիմա գնացքաշարը բաղկացած է երեք վագոնից, ամեն տեսակից՝ մեկական, ապա ամառվա սեզոնին վագոնների թիվը հասցվում է 16-17-ի:

***- Վերջին ժամանակներս, նկատելիորեն փոխվել է երկաթուղային վանդակների եւ վագոնների բարեկարգման վիճակը, թեպետ այդ ուղղությամբ անելիքները շատ են: Ի՞նչ ծրագրեր եք նախատեսել առաջիկայի համար:***

- Մենք իրականացնում ենք վագոնների վերանորոգում: Միջազգային ուղղություններով ունենք վագոններ, որոնք տասը տարի չէին վերանորոգվել, շարժական համակարգը գործնականում ամորտիզացված էր: Այդ ուղղությամբ մեծ ծավալի աշխատանքներ կատարեցինք, միջազգային ուղղություններով երթեւեկող 20 վագոններից 17-ը արդեն վերանորոգվել են: Մինչեւ տարվա վերջ մտադիր ենք վերանորոգել բոլոր քսան վագոնները: Վերանորոգել ենք նաեւ 7 էլեկտրաքարշեր: Դրանք արդիականացվել են բարձր մակարդակով: Կարող եմ ասել, որ Վրաստանի երկաթուղին նման կատարյալ էլեկտրաքարշեր չի ունեցել: Վրաստանի ողջ մասշտաբով արդի աշխատանք է տարվում վանդակների վերանորոգման ուղղությամբ: Ներկա դրությամբ, արդեն ավարտվել է 8 վանդակի վերանորոգումը, 2016 թվականին ծրագրում ենք վերանորոգել եւս 12-ը:

***- Ընդհանրապես, էլ ի՞նչ նորամուծություններ եք ծրագրում ներդնել:***

- Բնականաբար, ձեռք բերածով բավարարվելու մտադրություն չունենք եւ ծրագրում ենք ներդնել նոր նախագծեր: Մասնավորապես, ցանկանում ենք փոխել տոմսերի վաճառքի համակարգը: Աշխատում ենք նոր համակարգի ներդրման շուրջ, որը կսկսի գործել 2016 թվականի ամռանը: Այն կոչված է ուղեւորներին պաշտպանել անսպասելի բարդություններից, օրինակ, տոմսի կորստից:

Կներդրվեն նաեւ շտրիխ կոդով տոմսեր, որոնք կունենան տեղեկատվություն ուղեւորի մասին, իսկ ուղեկցորդներին կտրամադրվի տոմսի ընթերցման համար հատուկ սարքավորում:

Այդ ամենի հետ միասին, ներկայումս սկսվել է թբիլիսյան կայարանի վերանորոգումը:

Ինչպես գիտեք, վերջերս բացվեց Բաթումիի նոր կայարանը, որը կառուցվել էր նոր հիմնադրույթով: Ներկա դրությամբ, այն լավագույն երկաթուղային կայարանն է ողջ Վրաստանում: Բնականաբար, մենք ցանկանում ենք հասնել այն բանին, որ այդպիսին լինի նաեւ Թբիլիսիի երկաթուղային կայարանը: Ներկայումս աշխատում ենք նոր նախագծի շուրջ եւ հուսով ենք, որ հաջողության կհասնենք: Ցանկանում եմ ընդգծել, որ վրացական երկաթուղու համար նշանակալիցը յուրաքանչյուր ուղեւորի հարմարավետության ապահովումն է: